

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի դասական աճուրդի:

ԼՈՏ 1 - ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, գ. Փարաքար, Գ. Լուսավորչի փողոց 2/1 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ 04-094-0135-0001 կադաստրային ծածկագրով, 0.02357 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-05-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել ընդհանուր՝ 8003373 ՀՀ դրամ: Աճուրդը կայանալու է 2023 թվականի մայիսի 3-ին ժամը 11:00-ին:

ԼՈՏ 2 - ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության, 04-074-0123-0244 կադաստրային ծածկագրով, 0.3465 հա մակերեսով վարելահող՝ գործառնական նշանակության հողամաս, գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-06-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել ընդհանուր՝ 5000.000 ՀՀ դրամ:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի մայիսի 3-ին ժամը 11:30-ին:

ԼՈՏ 3 - ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության, 04-030-0194-0007 կադաստրային ծածկագրով, 0,1181 հա մակերեսով հողամաս: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-07-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 350.000 ՀՀ դրամ:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի մայիսի 3-ին ժամը 12:00-ին:

ԼՈՏ 4 - ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի Տ. Անդրեասյան փողոց 4/4 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության, 04-069-0050-0106 կադաստրային ծածկագրով, 0,063 հա մակերեսով հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 504.0 քմ մակերեսով հողամասը երկհարկանի բնակելի տուն կառուցելու, իսկ 126.0քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-08-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 5000.000 ՀՀ դրամ:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի մայիսի 3-ին ժամը 12:30-ին:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Առկա է ճանապարհ: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում, ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023 թվականի ապրիլի 27-ը, ժամը 18:00-ը: Հեռ.՝ 0231-6-00-42:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ